ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ապրիլի 2023 թվականի N 544 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1035-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների մագիստրատուրայի, ասպիրանտուրայի և օրդինատուրայի այն մասնագիտությունները հաստատելու մասին, որոնցից որևէ մեկով առկա ուսուցմամբ սովորողի (ուսանողի) աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված եկամտային հարկն ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով վերադարձվում է» N 1035-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) NN 1 և 3 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2) N 2 հավելվածի՝

ա. «Ե.00.00 Տեխնիկական գիտություններ» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«

Ե.05.00	**Տրանսպորտային, լեռնային և շինարարական մեքենաշինություն**	
Ե.05.01	Ավտոմեքենաներ և տրակտորներ	Տեխնիկական
Ե.18.00	**Պարենամթերքի տեխնոլոգիա**	
Ե.18.01	Բուսական և կենդանական ծագման մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա	Գյուղատնտեսական, տեխնիկական

»,

բ. «Զ.01.00 Ագրոնոմիա» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«

Զ.01.02	Բուսաբուծություն, խաղողագործություն, պտղաբուծություն և բույսերի պաշտպանություն	Գյուղատնտեսական, կենսաբանական

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023/2024 ուսումնական տարվանից և տարածվում նաև մինչև 2023/2024 ուսումնական տարին սույն որոշմամբ հաստատված հավելվածներում նոր ընդգրկված մասնագիտություններով սովորողների վրա՝ 2023/2024 և հետագա ուսումնական տարիների ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված եկամտային հարկի վերադարձի իրավունքով:

3. Մինչև 2023/2024 ուսումնական տարին «091601.00.7 Ֆարմացիա» մասնագիտությամբ մագիստրատուրա կամ «Ակնաբանություն», «Լաբորատոր ախտորոշում», «Ճառագայթային ախտորոշում», «Մանկաբարձություն և գինեկոլոգիա», «Սրտաբանություն (կարդիոլոգիա)» մասնագիտություններով կլինիկական օրդինատուրա ընդունված սովորողները մինչև ուսումնառության ավարտը շարունակում են օգտվել ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված եկամտային հարկի վերադարձի իրավունքից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

14.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ